ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

03 Օգոստոսի 2017 թվականի N 85

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածներովով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 22-28-րդ կետերով, հիմք ընդունելով Ձորաղբյուր համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 21-ի N23 որոշումը և հողամասն աճուրդով վաճառելու մասին 2017 թվականի հուլիսի 27-ի N09/2-1 արձանագրությունը

Որոշում եմ՝

1. 2017 թվականի հուլիսի 27-ին կայացած աճուրդում հաղթող ճանաչված Մարտիկ Գեղամի Շահգելդյանին օտարել համայնքային սեփականություն հանդիսացող (ծածկագիր՝ 07-042-0317-0229) 1.91521հա գյուղ. նշանակության հողամասը:
2. Պարտավորեցնել Մարտիկ Գեղամի Շահգելդյանին համայնքի բյուջե վճարել 597110 (հինգ հարյուր իննսունյոթ հազար հարյուր տասը) դրամ՝ հողամասի գինը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 Օգոստոսի 2017 թվականի N 86

ԱԼԵՔ ԱՎԵՏԻՍԻ ԴԵՊԵՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10,11,22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ալեք Ավետիսի Դեպերյանին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզ Ձորաղբյուրի 2-րդ ա/զ 40 թաղ. թիվ 31 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ալեք Դեպերյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուր 2-րդ ա/զ 40 թաղ. թիվ 31 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=35.60քմ «ինքնակամ այգետնակը», S=31.65քմ «ինքնակամ այգետնակը», S=6.25քմ «ինքնակամ բպ-ն» և S=1.00քմ «ինքնակամ հենապատը» համարել օրինական՝ հիմք ընդունելով «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ինքնակամ շինության օրինականացման համար վճար չի գանձվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

07 Օգոստոսի 2017 թվականի N 87

ԱՆԱՀԻՏ ՕՆԻԿԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8.1,10,11,13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով, որ Անահիտ Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Հատիսի փողոց թիվ 34 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անահիտ Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Հատիսի փողոց թիվ 34 հողամասում գտնվող S=121.6քմ «ինքնակամ բնակելի տունը», S=21.85քմ «ինքնակամ շինությունները», S=7.4քմ «ինքնակամ պարիսպը», ինքնակամ բացված 3 պատուհանը և 1 դուռ ինքն. ձևափոխված պատուհանի համարել օրինական՝ հիմք ընդունելով <<ԳԻՍ-ԱՐՏ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Պարտավորեցնել նրան համայնքի բյուջե վճարելու 121.6քմ ինքնակամ բնակելի տան համար, 1քմ-ը 2600 դրամ, ընդամենը՝ 316160 /երեք հարյուր տասնվեց հազար հարյուր վաթսուն/ դրամ, 21.85քմ ինքնակամ շինությունների և 7.4քմ ինքնակամ պարսպի համար, 1քմ-ը 1560 դրամ, ընդամենը՝ 45630 /քառասունհինգ հազար վեց հարյուր երեսուն/ դրամ:

3. Գումարը պետք է փոխանցվի Ձորաղբյուրի համայնքապետարանի, Աբովյանի ՏԳԲ, 900105221213՝ ինքնակամ կառույցների պետ գրանցում, հաշվեհամարին:

4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 30-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ